


ИСТОРИЯ

Հայրենադարձների մասնակցությունը Խորհրդային տոներին Հետպատերազմյան տարիներին

Ղազարյան Գայանե Խ.

կրտսեր գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0001-6403-140X>

gayane.ghazaryan.1992@mail.ru

ՀՏԴ 091; EDN: LIQQIM

DOI: 10.58587/18292437-2025.2-72

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ հետպատերազմյան շրջան, տոնական առօրյա, նոր կենցաղ, տոնական երթեր, գաղափարական զենք

Участие репатриантов в советских праздниках в послевоенные годы

Казарян Гаяне Х.

младший научный сотрудник, Институт истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. Послевоенный период был тем этапом, когда коммунистическая идеология глубоко укоренилась в стране, а праздники стали неотъемлемой частью повседневной жизни советского человека.

В 1946-1948 годах Репатрианты, иммигрировавшие в Советскую Армению, также принимали участие в советских праздниках. Важно отметить, что участие в этих мероприятиях оказывало психологическое воздействие на них. Можно констатировать, что праздники обеспечивали высокий настрой населения Советской Армении, что особенно нравилось репатриантам, и без того находившимся в сложной психологической ситуации, и давало возможность общаться в более непринужденной и открытой обстановке, лучше узнавать местных армян. В этой радостной атмосфере, среди смеха и музыки, репатрианты могли забыть о своих тревогах и найти новую опору в коллективной идентичности.

Ключевые слова и словосочетания: Послевоенный период, праздничные будни, новый образ жизни, праздничные шествия, идеологическое оружие

Participation of Repatriates in Soviet Holidays in the Post-War Years

Ghazaryan Gayane Kh.

Junior Researcher, National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The post-war period was the stage when the communist ideology was deeply rooted in the country, and holidays became an integral part of the daily life of the Soviet people.

Between 1946 and 1948, repatriates who immigrated to Soviet Armenia, also took part in Soviet holidays. It is important to highlight that participation in these celebrations had a significant psychological impact on them.

It can be stated that the holidays ensured a high mood of the population of Soviet Armenia, which was especially liked by the repatriates, who were already in a difficult psychological situation, and gave the opportunity to communicate in a more relaxed and open atmosphere, to get to know the local Armenians better. In this joyful community, amidst laughter and music, the repatriates could forget about their worries and find new support in the collective identity.

Keywords & phrases: Post-war period, festive everyday life, new lifestyle, festive processions, ideological weapons

Խորհրդային ամբողջատիրական համակարգում տոներին տրվում էր առաջնային և կարևորագույն տեղ: Դրանք կազմում էին իրականացվող գաղափարական աշխատանքի հիմնական մասը և սոցիալիստական նոր կենցաղի ձևավորման կարևորագույն գործոններ էին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդող ժամանակահատվածում կոմունիստական գաղափարախոսությունը խորը արմատներ էր գցել ԽՍՀՄ-ում և տոները դարձել էին խորհրդային քաղաքացու առօրյա անբաժանելի մաս: Ուստի 1946 թ. ամռանը Խորհրդային Հայաստան մուտք գործելուց անմիջապես հետո հայրենադարձները ևս սկսեցին սկ-

տիվ ներգրավվել խորհրդային տոնական եռուզեռի մեջ:

Հայրենադարձներն առաջին անգամ մասնակցեցին 1946 թ. նոյեմբերի 7-ի տոնակատարությանը: Ընդհանրապես, ինչպես ողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում տոնակատարության պատրաստության համար կազմակերպվում էր հանրապետական հանձնաժողով՝ հատկապես հորեյանական տարիներին: Հանձնաժողովը քննարկում և հաստատում էր տոնակատարությունը նախապատրաստելու և անցկացնելու հետ կապված միջոցառումները: Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման Հայկական ընկերությունը և Հայկական

ԽՍՀ Մինիստրներին խորհրդին կից կուլտուր- լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեի կենտրոնական դասախոսական բյուրոն, 1 ամիս առաջ քաղաքային և շրջանային կենտրոններում, ուսումնական հաստատություններում, հիմնարկներում, ինչպես նաև կոլտնտեսություններում և խոշոր ձեռարկություններում երեք օր շարունակ կազմակերպում էին զեկուցումներ, դասախոսություններ, անցկացնում հանդիսավոր նիստեր [5, էջ 2]: Խորհրդային տոների նշմանն անմասն չէր մնում նույնիսկ Հայ Առաքելական եկեղեցին: Նոյեմբերի 7-ին (Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին) և նոյեմբերի 29-ին (Հայաստանի խորհրդայնացման օրը) Էջմիածնի Մայր տաճարում Մուրթ պատարագ էր մատուցվում [3, էջ 19]:

Երևանում հանդիսավոր նիստերը տեղի էին ունենում Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում: Հաջորդ օրն ամբողջ քաղաքը զարդարվում էր լոզունգային պաստառներով և նկարներով: Լենինի անվան հրապարակում՝ տրիբունայի դիմաց, կանգնում էին Երևանի կայազորի զորամասերը, հավաքվում ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորները, մինիստրները, ակադեմիկոսները: Հնչում էր փողային նվագախումբը, որից հետո սկսվում էր Երևանի կայազորի զինվորների զորահանդեսն ու աշխատավորների միտինգը:

Աշխատավորական կոլեկտիվների հետ 1946 թ. նոյեմբերին առաջին անգամ ցույցին մասնակցող ներգաղթյալ հայերն իրենց «Կեցցե՛ մեր Ազատարար Ստալինը» կոչերով ընդգծում էին Ի. Ստալինի կարևորությունը իրենց Խորհրդային Հայաստան բերելու գործում: Դրան ի պատասխան, տրիբունայից հնչում էր՝ «Կեցցեն տարագրությունից հայրենիք վերադարձած մեր հարազատ եղբայրներն ու քույրերը» [9, էջ 10]:

Հայրենադարձները երթերին մասնակցում էին իրենց երաժշտական գործիքներով, նվագում էին, երգում հայերեն երգեր, ինչպես նաև այն երկրների լեզվով ժողովրդական երգեր, որտեղից եկել էին: «Սովետական Հայաստան» ամսագրում տպագրված լուսանկարում պատկերված են հայրենադարձ երիտասարդները՝ Լենինի անվան հրապարակում, Հայրենական պատերազմում հաղթանակի օրը¹: Նրանք հագնված են

շատ կոկիկ՝ կոստյումով, վերնաշապիկով և լայնեզր գլխարկներով: Աղջիկները նույնպես կոստյումով, վերնաշապիկով, կիսաշրջագետտով: Նրանք բոլորը բարձր տրամադրությամբ երգում էին երաժշտական գործիքի հնչյունների ներքո [10, էջ 7]: Նույնպիսի ակտիվություն և ոգևորություն տիրում էր նաև մայիսմեկյան երթերի ժամանակ: Ուսումնասիրված արխիվային փաստաթղթերը, անցակցված հարցազրույցները, հրապարակված հուշագրությունները, մամուլում հրապարակված նյութերը փաստում են, որ հետպատերազմյան տարիներին բնակչության սիրելի տոնը մայիսի մեկն էր, որը կապվում էր աշխատավորների իրավունքների պաշտպանության և իրավահավասարար սկզբունքներով աշխատանքի կազմակերպման հետ:

Բացի այդ, հայրենադարձները մեծ ակտիվությամբ տոներին նվիրված հողվածներով հանդես էին գալիս խորհրդային մամուլում: Ներգաղթյալներն ամեն կերպ փորձում էին ընդգծել այն կարևոր փոփոխությունը, որ տեղի էր ունեցել իրենց կյանքում Խորհրդային Հայաստան ոտք դնելուց անմիջապես հետո: Այս առումով հետաքրքրական է Էջմիածնի շրջանի Արգավանդ գյուղի կոլտնտեսական Իսկանդար Անդիկյանի հողվածը Խորհրդային Հայաստանի 30-ամյակի ձեռքբերումների վերաբերյալ: Նա շեշտում է այն հանգամանքը, որ հայրենիքը տվեց իրեն այն ամենը, ինչը երազել էր Հունաստանում՝ սկսած տարրական անկողնային պարագաներից: Խոսում էր իր ապահով կյանքի և կուշտ լինելու մասին և թե ինչպիսի խաղաղ պայմաններում է աշխատում գյուղում, որտեղ գործի մեծ մասը կատարում են մեքենաները, իսկ ինքն ընդամենը հսկում է: «Ի՞նչ էիր Իսկանդար, ի՞նչ դառար» արտահայտությամբ նա փորձում է ընդգծել իր կյանքում տեղ գտած էական փոփոխությունները Խորհրդային Հայաստան մուտք գործելուց հետո [14, էջ 42]:

Խորհրդային իրականությունում մեծ շուքով նշվում էր նաև կանանց միջազգային օրը՝ մարտի 8-ը: Այն, ինչպես և 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տոնական օրացույցում տեղ գտած խորհրդային ցանկացած տոն, ուներ իր գաղափարական հիմքերը: Այս դեպքում կոմունիզմի կառուցման առաջնագիծ էր մղվում խորհրդային կինը, որն ուներ տղամարդկանց հետ հավասար իրավունքներ: Հետպատերազմյան շրջանում մարտի 8-ը դարձավ դարբին, շինարար, տիեզերագնաց, վետերան, գրող, պատգամավոր կանանց տոնը: Կինը հայտնվեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Սկսվում էր գնահատվել կնոջ կանացիությունը և զեղեցկությունը: Ժամանակաշրջանը ոչ ամբողջ

¹ Ընդ որում, 1945 թ. հաղթական մայիսից հետո տոնը նշվել է ևս երկու տարի՝ 1946 և 1947 թթ.: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1947 թ. դեկտեմբերի 23-ի հրամանով տոնական օրացույցում տեղի ունեցավ փոփոխություն, համաձայն որի Ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը, դարձավ աշխատանքային, իսկ հունվարի 1-ը՝ Ամանորը, ոչ աշխատանքային [15]: Միայն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1965 թ. ապրիլի 26-ի հրամանով իրավի-

ճակը փոխվեց. մայիսի 9-ը կրկին դարձավ ոչ աշխատանքային [16]:

ջությամբ, սակայն ետ մղեց կնոջ և տղամարդու հավասարության խնդիրները, քանի որ պատերազմական պայմաններում կանայք կամա թե սկամա աշխատում էին տղամարդկանց հետ հավասար: Այնուամենայնիվ, մամուլում շարունակվում էին տպվել հողվածներ՝ կնոջ իրավունքների և իրավահավասար հիմունքներով աշխատանքի կազմակերպման վերաբերյալ: Կանանց իրավունքներին անդրադառնում էին նաև հայրենադարձ կանայք, ովքեր իրենց «հիացմունքն էին արտահայտում» խորհրդային երկրում իրենց ընձեռած իրավունքների վերաբերյալ: Նրանք պատմում էին իրենց կյանքի պատմությունը, թե ինչպես մի «աննշան, իրավագուրկ» մարդկանցից իրենք վերածվեցին աշխատանքային և սոցիալական բոլոր իրավունքներով օժտված անձանց: 1946 թ. Ռուսիայից Հայաստան ներգաղթած Թագուհի Քյոսեյանը, ով երկար տարիներ ականատես էր եղել, թե ինչպես են կնոջը վերաբերվում այդ երկրում՝ պիտակավորելով իբրև «տկար սեռ» և «սալոնի գարդ», իր հիացմունքն ու հուզմունքն էր արտահայտում Խորհրդային Հայաստանում կնոջ իրավունքների առթիվ: Նա նկարագրում էր իր անսահման ուրախությունը, քանի որ իրեն վստահվել էր Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայում խաղալ Անուշի դերը [11, էջ 33]:

Սակայն, ամեն ինչ այդքան միանշանակ չէր: Ստալինյան վարչակարգը՝ իր բռնություններով և երկայնա կանոններով բնակչության շրջանում ստեղծել էր վախի և ատելության մթնոլորտ: Թեև ատելությունը բացահայտ չէր, բայց այն երբեմն իր արտահայտությունն էր գտնում ընտանեկան և ընկերական նեղ միջավայրում վարչակազմի կատարած աշխատանքի և առաջին հերթին տոների նկատմամբ դժգոհություն հայտնելով: Ուստի որոշ դեպքերում խորհրդային տոներին հայրենադարձների մասնակցություն ցուցաբերելը դառնում էր ձևական ու զուտ արարողակարգային [7, էջ 181]:

Զանգվածային տոնակատարությունները երբեմն հայրենադարձների համար ստեղծում էին հարմար պայմաններ՝ խորհրդային պետությունից փախուստի պլան մշակելու և իրենց մտածածն իրականություն դարձնելու համար: Տոնական օրերին իրավապահ մարմինները նախապես մեծ աշխատանք էին կատարում անկարգությունները կանխելու առումով, վերահսկում էին իրավիճակը: Ոստիկանության ներկայացուցիչները հերթապահություն էին կատարում: Բացի այդ, յուրաքանչյուր անկյունում կային մարդիկ, ովքեր հետևում էին քաղաքացիների գործողություններին, հատկապես հայրենադարձների, որոնք հսկողության տակ էին: Սակայն նրանց հաջողվում էր միմյանց հետ զրույցներ ծավալել, փախուստի պլաններ մշակել: Այսպես՝ 1947 թ. նոյեմբերի 7-ի տոնական

երթից հետո 7 հոգանոց հայրենադարձների խմբի անդամները հավաքվել էին Լենինականի շուկայում, մշակել փախուստի պլան, այնուհետև գնացել ռեստորան, կերել-խմել և ուղևորվել դեպի Բայանդուրի կայարան՝ այնտեղից թուրքական սահմանը անցնելու նպատակով: Սակայն երեկոյան սահմանապահ ջոկատի զինձառայողները նրանց հայտնաբերում և ձերբակալում են [4, էջ 81]: Այսինքն կարելի է կարծել, որ տոնական օրը հայրենադարձների համար փախուստի հարմար պահ է դիտվել: Այն է՝ օրվա ընտրությունը ինքնանպատակ չէր, այլ՝ մտածված քայլ:

Ընդհանուր առմամբ, ներգաղթյալները թեև դանդաղ, բայց փորձում էին հաղթահարել ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող գաղափարական պատնեշը: Դա հատկապես ավելի արագ տեղի էր ունենում երիտասարդների շրջանում, որոնց մի մասը, մոռանալով ներգաղթի սկզբնական փուլում առաջ եկած դժվարությունները, նոր միջավայրում փորձեց միանգամայն նոր կյանք կառուցել: Ուստի շատ դեպքերում հենց տոներն այն օրերն էին, որի ժամանակ ներգաղթյալները փորձում էին կտրվել առօրյա հոգսերից, միախառնվել տիրող ընդհանուր տոնական մթնոլորտին և երգ ու պարով անցկացնել, ավելի սերտ ու անկաշկանդ տոնական միջավայրում շփվել տեղացի հայության հետ: Երբեմն նրանց մոտ այդ փոփոխությունը տեղի էր ունենում այնքան արագ ու ենթագիտակցաբար, որ նրանք չէին էլ կարողանում բացատրել դրա պատճառը: Այդ մասին պատկերավոր գրում է Սուրեն Բուրապյանը. «... Եվ որքան եղավ իմ գարնանքը, երբ մի քանի տարի հետո հանկարծ տեսա, որ ինձ համար էլ արդեն գոյություն չունի ազատության գաղափարը: Վիրահատական այդ գործիքի գորությունը զգացի այն ժամանակ, երբ մայիսի 1-ին կամ նոյեմբերյան շքերթներին՝ Ստալինի նկարը ձեռքիս, դեռևս առանց հավատի, բայց այնուամենայնիվ բնական համարեցի ձայնս միացնել երկիր-երկինք դրդացող համաժողովրդական բոցաշունչ ուռուռուսա-ին» [2, էջ 70]: Ուստի, կարելի է ասել, տոները կատարում էին իրենց հոգեբանական-քարոզչական գործառնությունը:

Թերևս միակ տոնը, որը հայության երկու հատվածների համար էլ միանշանակ ընդունելի, սիրելի էր ու չունեց ընդգծված գաղափարական բովանդակություն, դա Ամանորն էր: Հետպատերազմյան տարիներին Նոր տարին ավանդական տոնակատարություն էր՝ համաժողովրդական տոն:

Բեյրութից հայրենադարձված Սայենի Պայանը նկարագրում է, թե ինչպիսի եռուզեռի մեջ էին տեղացի հայ կանայք 1947 թ. Ամանորին պատրաստվելիս. «Հայրենաբնակ ժողովուրդը արտակարգ եռուզեռի մեջ էր: Ամեն տուն ժրագանձաբեր պատրաստում էր դիմաւորելու 1947ի նոր տարին: Կանայք զանազան տեսակի խմորեղեններ, գա-

թաներ թխելով լցնում էին տաշտակները: Նոր տարին նրանց համար «ազիզ» օր էր. ու նաև կանանց շնորհների ստուգատեսի օր...: Ամեն տանտիկին աշխատում էր այնպիսի սեղան յարդարել, որ գերազանց էր իր ծանօթի, իր հարեանի սեղանին...: Նոր տարուայ հիւրասիրությանները վերջանալուց անմիջապես հետոյ նրանք սկսում էին միւս տարուայ սեղանի մթերքը սպահովել» [8, էջ 83]: Ժամանակակիցների վկայությամբ՝ դա մեծ, համաժողովրդական տոն էր: «Ինչ Մոտալին, ինչ Լենին, հավաքվում էին, կենսոցներ էին ասում՝ երջանկության, սիրո, հայրենիքի մասին, մեկ-մեկ էլ մերոնք (ծնողները) նենց էին տաքանում, որ սկսում էին հայրենասիրական երգեր երգել», — պատմում է Վազգեն Թորոսյանը [6]:

Ներգաղթյալները Խորհրդային Հայաստան գալու առաջին տարիներին, բնականաբար, դեռ բարդ հոգեվիճակում էին: Նրանց ֆինանսական դրությունը նույնպես թույլ չէր տալիս ճոխ և առատ Ամանոր տոնել: Բացի այդ, նրանց համար չափազանց դժվար էր տարվա ընթացքում Ամանորի համար մթերքներ տնտեսել: Այդ պատճառով էլ բավարարվում էին այդ օրը շատ համեստ սեղանով: Օրինակ՝ Մայենի Պայանը, հիշելով 1947 թ. Ամանորը, գրում է. «Նոր տարին դիմադրեցինք մեկական ափ չամիչ բաժանելով երեխաներին..., որը քսան օր առաջ որպէս զանձ պահել էինք այդ օրուայ համար» [8, էջ 84]: Մովսես Բազարյանի համար ևս Խորհրդային Հայաստանում առաջին Նոր տարին եղել է «անշուք», քանի որ կար վաղվա չոր հացը վաստակելու մղձավանջը [1, էջ 36]: Մուրեն Բուրասայանը հիշում է, որ հայրենիքում առաջին նոր տարին դիմավորել է իրենց հետ ներգաղթած չորս հորեղբայրների ընտանիքների հետ՝ ուտելով առավոտյան քարտով օրաբաժնով ստացած 300 գրամ հացը և ծիծաղելի պատմություններ հիշելով «իրենց գլխին եկածների մասին» [2, էջ 56]: Արդեն 1950 թ. նույն Մովսես Բազարյանը տեղացիների՝ նոր տարին ճոխ սեղանով ու, անկախ դժվարություններից, ուրախ տրամադրությամբ դիմավորելը, զովելի սովորություն էր համարում և փորձում էր այդ մթնոլորտից անմասն չմնալ [2, էջ 60]: Նույնը անում էին նաև մյուս ներգաղթյալները: Նոր տարվա նշումը պայծառ գույներով նկարագրվում էր թերթերում և ամսագրերում: Այսպես՝ «Մովետական Հայաստան» ամսագրի համարներից մեկում պատկերված են երջանիկ հայրենադարձներ, ովքեր Ամանորը տոնում էին իրենց նոր տանը: Սենյակի պատերին կախված էին Վ. Լենինի և Ի. Ստալինի մեծադիր նկարները, իսկ մեջտեղում տոնածառն էր՝ զարդարված աստղաձև խաղալիքներով [13, էջ 25]:

Այսպիսով, այն գաղափարական գործառույթը, որը կատարում էին տոները Խորհրդային Միությունում, ծառայում էր իր քարոզ-

չական նպատակին: Կամա թե ականա նրանց մասնակցություն էին ունենում նաև հայրենադարձները: Տոները ներխուժում էին ոչ միայն մարդկանց առօրյա, այլև հոգեբանական խորը ազդեցություն էին թողնում նրանց վրա: Զաղաքացիները հավատում էին, որ իրենք կարևորի մաս են կազմում և դա երբեմն օգնում էր չտեսնել այն դժվարությունները, որը ստեղծում էր համակարգը: Գաղափարական դաստիարակությունից առավել, կարող ենք փաստել, որ տոները ապահովում էին խորհրդահայ բնակչության ուրախ առօրյան, որը առանձնապես դուր էր գալիս առանց այն էլ բարդ հոգեբանական իրավիճակում գտնվող ներգաղթյալներին և հնարավորություն ընձեռնում ավելի անկաշկանդ ու բաց միջավայրում խոսել ու ավելի մոտիկից ծանոթանալ հայաստանցիների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Բազարյան Մ.** Նամակներ Մովետական «դրախտից» (ներգաղթի և ներգաղթողների մասին): – Երևան, 1996:
2. **Բուրասայան Ս.** Ամորձատված սերունդ: – Լոս-Անճելես, 1993:
3. **Մայր աթոռ:** Էջեր 19-20: // «Էջմիածին» Պաշտօնական ամսագիր Հայրապետական պոռոչ Ս. Էջմիածին: 1947, նոյեմբեր-դեկտեմբեր (Հմ. ԺԱ-ԺԲ): – 95 էջ:
4. **Խաչատրյան Կ.** Հայրենադարձ հայերի սահմանախախտումների խնդիրը «մեծ հայրենադարձության» տարիներին (1946–1948 թթ.), Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը» (1940-1960-ական թվականներ), հոդվածների ժողովածու: – Երևան, 2020:
5. «Կոլխոզային գյուղ» Օրգան ՀԿ(Բ)Պ Մեղրու շրջանի և աշխատավորների դեպուտատների շրջանային սովետի, 1950, 29 նոյեմբերի, № 58 (836):
6. Հարցազրույց Վազգեն Թորոսյանի հետ, 18.09.2019, հեղինակի անձնական արխիվ:
7. **Ղազարյան Գ.** «Խորհրդային տոները Հայկական ԽՍՀ բնակչության առօրյա կյանքի համատեքստում, Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը» (1940-1960-ական թվականներ), հոդվածների ժողովածու: – Երևան, 2020:
8. **Պալեան Ս.** Յուշեր ստալինեան օրերից: – Լոս Անճելես, 1988:
9. «Մովետական Հայաստան» Օրգան ՀԿ(Բ)Պ Կենտկոմի և Հայկական ՄՍՌ աշխատավորության դեպուտատների սովետների, 1946, թերթիկ № 11 (282), մարտի 25:
10. «Մովետական Հայաստան», 1947, թերթիկ № 5 (329), հունվարի 27:
11. «Մովետական Հայաստան», 1948, թերթիկ № 3:
12. «Մովետական Հայաստան», 1948, թերթիկ № 11:
13. «Մովետական Հայաստան», 1950, թերթիկ № 1:
14. «Մովետական Հայաստան», 1950, թերթիկ № 11:
15. Указ Президиума Верховного Совета СССР от 23 декабря 1947 года «Об объявлении 1 января

нерабочим днём». <https://goo.su/HPkwF7M>
(հղումը կարճեցված է, մուտքը՝ 19.05.2020):

16. Указ Президиума Верховного Совета СССР от 26 апреля 1965 года «Об объявлении 9 мая нерабочим днём», <http://base.garant.ru/6341190/>
(մուտքը՝ 18.05.2020 թ.)

Сдана/Հանձնվել է՝ 12.03.2025
Рецензирована/Գրախոսվել է՝ 19.03.2025
Принята/Ընդունվել է՝ 26.03.2025